

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիո

Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Երեսամս. 12 ֆր.

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ

ՊԵՏԱԿԱՆ

Գրութիւնք եւ

չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՀԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Դ՝ ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 20 ՇՈՒՐԵՍ 1900

ԹԻԻ 163

ԱԼԲԱՒԱԿԱՆ Է

Առանց խորհն քննելու շարժաւիթը, որ մեզ շատ հեռուն պիտի տանէր մեր նպատակէն, պէտք է ցաւօք խոստովանիլ թէ մեր մէջ վերջին տառնեակ տարիներ կուսակցամոլութիւնը ստացաւ ահագին համեմատութիւն մը և տեղի տուաւ շատ տխուր երևոյթներու, որոց գլխաւոր հանդիսատեսը եղաւ ժողովուրդին լուրջ դատարարը, սրբոյն անհուն մարմարով:

Եղբայրասպան կռիւներու արձագանքը՝ Մօն Պլանէն մինչև Բորգերը, Սէնէն մինչև Թայմը, սեւ ուրուականի մը մահահոտ զօղանշներովը լեցուց մթնոլորտը և միտնգամ եւ ցոյց տուաւ աշխարհի թէ Հայը ան ատեն միայն քաջ է, երբ իր կռիւն իր եղբորը դէմ է, ան ատեն միայն ազգասէր է, երբ թշնամուոյն սուրէն հեռի արտասահմանի թաւ շեյթ բազմոցներուն վրայ հեշտ է իրեն հայրենասէրի հալիւ առնել ու իր եղբորը չը տալու համար այդ փառքը, անոր անունը ու պատիւը աղարտել ճիւղաւորին պաղարիւնութեամբ մը:

Այդ տառը տարիներու րնթացքին մէջ հայ կեանքին վրայէն հով մը անցաւ չորաշուք, որ տեղն ի տեղը խամրեց ամեն առաւելութիւն, ամեն պատուազգացութիւն և ամեն աղնուութիւն:

Յեղափոխական բազինին վրայ, ուր պէտք էր ծուրը հուրը արծարծել և ամեն եռականութիւնէ վեր պահել զայն, սկսաւ զեկաւարներու ցած շահամուլթեանը պատճառաւ մէկիկ մէկիկ կրակի տրուիլ մեր ամեն ձիրքերն ալ:

Այդ աղգային դահիճները լաւ ճանչցած ըլլալով հայուն էն տկար կողմը, անմիաբան ոգին, դանի կուսակցամոլութեան մղեցին և անոնց մէջ լայն:

արձակ խրամադներ բանալով, իրարմէ խաղաօտարացուցին: Ու այսպէս անոր դրօշին տակ՝ ամեն ազգութիւն, սրբութեան դէմ ամեն դաւաճանութիւն ի գործ դրին սանձարձակ:

Մեր ազգային մթնոլորտին վրայ սեւ մուխ մը ստեղծեցին, որպէս զի զիրար չը ճանչնանք ու մեր գնդակները իրարու ուղղենք, վասն զի մեր գնդակներով պիտի կշտանային իրենք:

Մեր անգաստանները օտարոտի փուշերով ծածկեցին, որպէս զի մեր մարմիններէն հոսած արիւնը լլուրձաւէին կուշտ կուշտ:

Մեր ջուրերը պղտորեցին, որպէս զի իրենք ձուկ որսային համարձակ:

Ու գործելու այդ եղանակին շնորհիւ, ամենքնիս ալ մոռցանք հանրութեան լիշնամին, մոռցանք յեղափոխութեան մեր վրայ դրած պարտքը, մոռցանք մեր սիրելիներուն արիւնը, մոռցանք անոնց յիշատակը եւ ահա զիրար կը յօշոտենք:

Գործիչներ, ինչ որ ալ ըլլան այն թեւադրութիւնները, որոցմով իրաց վիճակը բերիք հոս հասուցիք, մեր ապագային համար զմեզ ջլապնդելու հանգամանքէն չուրկ հաւատացէք, թէ իրաւամբ յուսահատութեան կը մղեն:

Մեր ետին փլատակներու կոյտեր եւ մեր առջեւ սոսկալի ամայութիւն մը... ամենն ալ ձեր այս ատենոյ ընթացքին ծնունդը... Սոսկացէք կացութենէն, ուր կը գտնուի Հայը Մասիսէն մինչեւ Տաւրոս, Նեղոսէն մինչեւ Միսիսի մերի, նօթի, ծորաւ եւ յուսահատ:

Մարտիրոսները իրենց գերեզմանէն եւ կենդանիները իրենց այս սրտայոյշ կացութեան տիղմէն կը պուան ձեր երեսին:

«Ալ բաւական է»:

ԾԱՆՕԹ

ԱՉԳԱՅԻՅԵ

ԵՆՈՎՔ ԲՈՒԴԱՂԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Բազուէն կը գրեն թէ, տեղւոյն ազգայիններէն նոր վախճանած նախահանքատէր Ենովք Բուզաղեան՝ կարևոր կտակ մը ըրած է:

Հանգուցեալը ու ամուրի էր և իր կենդանութեանը արդէն 50.000 ռուբլի մօտ գումար մը նուիրած է եղբոր այլ և այլ բարենպաստակ հաստատութեանց, կտակեր է 500 000 ռուբլի գումար մը եկեղեցիներու, վանքերու, գաղթոցներու, հիւանդանոցներու և այլն, ստպէս

150.000 ռուբլի՝ Բազուի մէջ յանուն Ս. Թագէտ Բարդուղիմէոսի եկեղեցի մը շինելու համար: 30.000 ռուբլի՝ նոյն եկեղեցիին անձեռնմխելի գումար, որուն տոկոսովը աղքատ աղջիկներ պիտի կարգուին, իւրաքանչիւրին օժիտ տալով 150 ռուբլի, դրամ կամ իրեղէն: 15.000 ռուբլի՝ Երուսաղէմ վանքին, 20.000 ռուբլի Գէորգեան ճեմարանին, 50.000 ռուբլի Բազուի մէջ հիւանդանոց մը կառուցանելու, 40.000 ռուբլի իր ծննդավայր Շամախի մէջ երկաթէ խողովակներով անուշ ջուր բերելու, աղբիւրներ շինելու և ձրի բաժնիկու համար, 10.000 ռուբլի Բազուի Բարեգործական ընկերութեան, 100.000 ռուբլի Շամախի Սաղիան գիւղին (ծննդավայր), այս գումարը պիտի պահուի արքունի պանքային մէջ, որուն տոկոսովը պիտի վճարուի գիւղին աղքատ դասակարգին պետական տուրքերը: 60.000 ռուբլի Բազուի մէջ երկու տուն շինելու և զայն վարձելով հասոյթը տարուէ տարի տեղւոյն աղքատներուն յատկացնելու համար, 20.000 ռուբլի Հայոց Մարդասիրական ընկերութեան, 5.000 ռուբլի հայ գրագետներու օգնող ընկերութեան, եթէ այդպիսի ընկերութիւն մը հաստատուի:

Բացի այս հինգ հարիւր հազար ռուբլի գումարէն, հանգուցեալը իր մնացած հարստութիւնը, մօտաւորապէս 440.000 ռուբլի կտակեր է չըքաւոր ազգականներուն: Կտակին մէջ խնդրեր է որ իր թաղումը կատարուի պարզ և համեստ կերպով ու թաղուի հոն ուր մեռած էր: Տապանաքարը ըլլայ պղտիկ, առանց ունի շքեղութեան և հետեւեալ արձանագրութեամբ. «Այս տեղ հանգչում է Շամախեցի Ենովք Բուզաղեանը»:

Հակառակ կտակին այդ տրամադրութեան, յուշարկաւորութիւնը կատարուեր է շատ շքով և առժամանակեայ կերպով թաղեր են հայոց գերեզմանատան մէջ: Երբ եկեղեցիին շինութեան հրամանը ձեռք բերուի, հանգուցեալին մարմինը պիտի փոխադրեն նոյն եկեղեցիին բակը:

Պարսկահայ ծանօթ վաճառական Պ. Գրիգոր Թումանեանց որ այս տարի Երուսաղէմ ուխտագնացութեանը պահուն Պալիս ալ հանգիպած էր, Աղզ. Հիւանդանոցին տարեկան 200 ռուբլի դուր մար մը յատկացուցեր է, նոյն հաստատութիւնը կատարած իր այցելութեան միջոցին:

—6000 զրշ ծախքով փայտեայ տաղաւարներ պիտի շինուին Հիւանդանոցին մէջ, ամրան արեւէն ու տաքէն յիմարները պատուարելու համար:

—Արաբկերի առաջնորդ Մուշեղ վարդապետ կը գրէ Պատրիարքարան թէ Ակնայ մէջ աղքատ ժողովրդեան տուներու շինութիւնը՝ Միսիօնարներու կողմէ յանձնուած 300 սակի՝ գումարովը սկսուած է:

—Երուսաղէմի Պատրիարքութեան Պոլսոյ նախորդ փոխանորդ հանգուցեալ Սիմոն Արքեպիսկ. Սէֆէրեան 3000 սակի գումար մը թողած է նոյն վանքին: Միաբանութիւնը անոր գերեզմանին վրայ տապանաքար մը շինել տուեր է:

—Սղերգի կարօտեալներուն համար 120 սակի նպաստ մը յատկացուած է: 30 սակի ալ Բինկեանի կարօտ ազգայիններուն:

—Թիֆլիզէն կը գրեն. «Քաղաքիս մէջ բացուելիք առևտրական վարժարանին բացումը կատարուեցաւ արդէն եւ մուտքի քննութիւններն տեղի ունեցան: Նախապատրաստական կարգը ունի 121 ուսանող՝ որոնց 84ը հայ են, իսկ առաջին կարգը ունի 99 ուսանող որոնց 74ը հայ»:

—ՊՏՈՅՏ Բարիգի արուեստահանդէսին մէջ.— Սոյն վերնագրին տակ համակրելի բարեկամ մը, որ այս միջոցին Բարիկ կը գտնուի, խոստացած է պարբերաբար մեզ զրկել Ատուեստահանդէսի մասին հետաքրքրաշարժ եւ շահեկան տեղեկութիւններ, զորս այսօրէն սկսեալ հաճութեամբ կը հրատարակենք:

— Եզրիպտոսէն կը գրեն թէ քիչ ատենէն Աղեք-
սանդրիա պիտի հասնի Փրանսացի նշանաւոր ճար-
տարագէտի մը յատակագիծներուն համաձայն,
Սկովտիոյ մէջ պատրաստուած հոյակապ դամբա-
րան մը, որ նուպար փաշայի գերեզմանին վրայ
պիտի բարձրանայ: Այս հոխ ու գեղեցիկ դամբա-
րանը մանրանկարն է Եզրիպտական հին դամբա-
րանի մը: Քառակուսի ձեւ մը ունի: Գամբարանին
սարանդը կը բարձրանայ երկու սիւներու վրայ:
Յիշատակարանին ետեւի ճակատը զարդարուած է
քառակուսի սիւներով, որոնց վրայ կը գտնուի գեղա-
կերտ խոյակ մը: Սիւներուն ստորոտը զարդարուած
է Լոդիս կոչուած ծաղիկի փունջերով: Գամբարա-
նին ճակատը կը բարձրանայ պատուանդան մը,
ուր պիտի կանգնուի նուպար փաշայի մարմարեայ
արձանը: Յիշատակարանը 6 մետր բարձրութիւն
ունի եւ շինուած է Սկովտական ընտիր կարմիր
կրանիթէ: Սոյն հոյակապ յիշատակարանը տեղ-
ւոյն վրայ պիտի զետեղուի յառաջիկայ ամսոյ մէջ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փ. Պոյիս

Ինչպէս գիտէք, տեղւոյս Արմենականաց Ե-
րանակցականաց միջեւ բացուած դատը ամսոյս
10 ին սկսաւ տեսնուիլ պատժական դատարանին
առջեւ. բայց վերջիններուն կողմէ եղած վիճա-
րը որոնք 7 հոգի էին, բացակայ ըլլալով (ան-
շուշտ կանխամտածութեամբ) դատը յետաձգուե-
ցաւ ու դատարանը տնոնց իւրաքանչիւրը 20 ա-
կան ֆրանք տուգանքի դատապարտեց:

Զմտնանք բուել թէ, ծիծաղելի Ֆիկուռա մը
դարձնել ուզած էին Երանակցական դատաւա-
րութեան արգելք ըլլալու համար, զոր կարժէ
«Հայերի» ազնիւ ընթերցողաց ծանօթացնել:

Ֆիկուռէն զրկուած յատուկ հրահանգի մը
համեմատ, Վիէննա դատաւոր իրենց համաձայնե-
րէն մէկ ան կողմէ հեռացիր մը կը զարնուի ի
Ֆիկուռէ, յայտարարող թէ Արսէն Վարդապետ
կորսուած է, այսինքն մեռած. կարծելով որ երբ այդ
հեռացիրը ներկայացուի Պ. Բ. օրոք, սա
վարդապետը մեռած է հզեր ըսելով դատը պի-
տի դոց, եւ որով Արսէն վարդապետի փաստա-
բանին շարաթ մը առաջ երկրորդ աղերսագրով
մը ըրած 3000 ֆրանքի վնասուց պահանջն ալ
չուրը պիտի իյնայ: Բայց Պ. Բ. օրոքը երբէք
կարեւորութիւն տուած չէ այդ քահանայութան
Ֆիկուռային եւ դատաւարութիւնը սկսած է:

Բ. դատաւարութեան ժամանակը եւ դատին
եւրը կը խոստանամ հազարբել Զեզ:

ՍԼԱՔ

Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՋԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԳԻՍԻՆ ՄԷՋ

1

Բարիդի 1900ի Արուեստահանգէսին բացու-
մը եղած է Ապրիլ 14 (Ն. Տ.) շաբաթ օրը կէս օ-
րէն ետքը ժամը 2ին:

Մոսկ — Արուեստահանգէսի մեծ դուռը, (մուտ-
քի դուռը) Գոնքորտի հրապարակին էն շքեղ
զարդը կաշմած է. գեղարուեստական հանալի
գործ մը որուն կատարը վերջին նորաձեւութեան
համեմատ հագուած սիրուն Բարիդուհի մը ար-
ձանը կը խորհրդանշանէ բուն իսկ Բարիդ քաղաքը:
Անկէ ներս, Քուռ Լա Ռէնի հոյակապ պարտէզ-
ները գէպի նիքուա Բ պողոտան կը տանին, ո-
րուն ալ կողմը կը գտնուի Գեղարուեստից պալատը
եւ ձախ կողմը Այեքսանդր Գ կամուրջը:

Այդ կամուրջը որուն առաջակողմը կը գտ-
նուին Տալու արձանագործին նշանաւոր առիւծ-
ները, սքանչելի շինուածք մըն է, կառուցուած
Ռուսիոյ Ալեքսանդր Գ. կայսեր յիշատակին. իր
իւրաքանչիւր անկիւնին վրայ կ'երեւան փոքր
սիւներ որոնք մէջ մէջ Պեգասեան թեւաւոր ձիեր
կը կրեն: Իսկ այդ սիւներէն ամէն մէկուն պատ-
ուանդանին վրայ, այլ եւ այլ արուեստագէտներ
պատրաստած են խորհրդանշանական արձաններ
որոնք այլ և այլ ժամանակներու Փրանսան կը ներ-
կայացնեն:

Կամուրջէն անդին կը պարզուի Էսթլանտ
տէ զինվալիտը, որուն երկու կողմերը կը գտնու-
ին աղղային տարազագործութեանց ցուցադրա-
վայրերը, դաստիարակութեան եւ կրթութեան
պալատը: Յետոյ յաջորդաբար, Սէնի ձախ եզեր-
քին վրայ օտար տէրութեանց տաղաւարները,
իւրաքանչիւրը անանձին ճարտարապետութեան
մը ծնունդ, ամէն մէկը իր անանձին հրապոյրով
Սէնի ալ եզերքին վրայ Բարիդ քաղաքին տաղա-
ւարը, պարտիզպանական ցուցադրավայրը, համա-
ժողովներու պալատը, ևն: Ալմայի կամուրջէն ան-
դին, Սէնի նոյն եզերքին վրայ Ռուսիայի յար-
գարած Հին Բարիդը(*), որուն դէմը, գետին ձախ
եզերքին վրայ ծովային եւ ցամաքային բանակ-

(*) Հին Բարիդ քաղաքի մասին «Հայերի» 148րդ
թիւին մէջ ընդարձակօրէն գրուած է: Ծ. Խ.

ներու, առեւտրական նաւարկութեան, անտառ-
ներու, որսի, ձկնորսութեան ցուցադրաւայրերը
եւն: Հին Բարիզին գրեթէ կիցն են Թրոքատե-
րոն, գաղթաւայրերու ցուցադրութիւնները: Յե-
տոյ, Եֆէզի կամուրջէն ադիւն կը պարզուի Շան-
տը Մարսը: Էֆէզի աշտարակը միշտ հոն է, միշտ
գեղեցիկ եւ աչքառու: Եւ ալ իրարու մօտ, իրա-
րու քով, Ալպեան քիւպը, Բօնէնի լուսաւոր պա-
լատը, Բանէորաման (աշխարհի շրջանին համայնա-
պատկերը) հանքերու, մետաղադործութեան, մե-
քենադիտական պալատները, Էսյլն, Էսյլն

Եփեսոսականութեան պալատը եւ Զուրիմեծաւա-
զանը. — Ելեկտրական պալատը որ ընդարձակ
շէնք մըն է, կը բարձրանայ շարժիչ զօրութիւն-
ներն արտադրող հաստատութեանց հանգէպ: Ար-
ուեստահանգէսին ձախ եղերքին համար ուժի եւ
լոյսի մատակարարութեան կեդրոնն է այս պա-
լատը, իր ճակատը լուսաւոր վիթխարի յակինթի
մը կը նմանի, մետաղի եւ բիւրեղի խառնուրդով
մը, ճարտարապետական հրաշակերտ մէջ որ իր-
կունները կը ցոլանայ բիւրաւոր գոյնզգոյն լոյ-
սերով:

Զուրի մեծ աւազանը Լուի Ժե. Ի ոճով շինուած
շէնք մըն է, ունի 33 մէդր լայնքով եւ 11 մէդր
խորութեամբ ընդունարան մը, որ կը պարունա-
կէ իր մէջ տեսակ մը մեծ աւազան ուրիշ կեր-
թայ շատրուաններու ջուրը 30 մէդր բարձրու-
թենէ մը վար թափուելով մասնաւոր ընդունարա-
ններու մէջ: Վազած ջուրին քանակն է մէկ երկ-
վայրկեանի մէջ 1900 լիտր, որ բսել է ժամը 4½ մի-
լիոն լիտր: Այդ ջուրը Սէնէն կուգայ: Շատրուան-
ներէն ցայտած ջրերով խորհրդանշան մը կը ձե-
ւանայ ուր կը տեսնուի Մարդկութիւնը որ Յառաջ-
գիւմութենէն առաջնորդուելով գէպի Ապագան
կը դիմէ, երկու անձեր կան փռուած գետնի վրայ
զորոյ ստնալու կընէ շարժիչ Ուժը, ասոնք են Ունա-
կութիւնն եւ Նախապաշարումը:

Դպրոցեանց, Գիտութեանց, Արուեստից եւ Հան-
քաց պալատը. — Սոյն պալատին գլխաւոր դուռը
որ դեպանկար դրուպներու հրաշակերտ մըն է,
կը գտնուի Էֆէզի աշտարակին դիմացը: Երեք
սքանչիւն արձաններ կը տեսնուին դաւթին մէջ,
որոնք Դիտութիւնը, Դպրութիւնը ու Արուեստը
կը ներկայացնեն: Շէնքը, իր երեք թեկերուն վը-
րայ, ինչպէս Արուեստահանգէսի ուրիշ շէնքերը,

բոլորովին ճերմակ է, բայց գորշ կերէի, շուրջը
գտնուող պալատաղեղ պարտէզներուն պատճա-
ռաւ: Դատարարութեան զանազան ճիւղերը,
գաղութեանց, գիտութեանց եւ արուեստից վե-
րաբերեալ զանազան դործիներ իրենց մասնաւոր
բաժանումներն ունին հոս: Անդրիա, Գերմանիա,
Ռուսիա, Աւստրիա եւ Հունգարիա, Իտալիա, Հոլան-
տա, Պէլճիգա, Զուիցերիա եւ Միացեալ Նահանգք
ի բարձրագոյն իրենց կարեւոր բաժիններն ունին
այս տեղ: Այցելուները հոս գալով կրնան գաղա-
փար մը կաղմիկ զանազան աղպաց մտաւորական
չորրոցացման վրայ: Մասնաւոր բաժանումներու մէջ
ի տես դրուած են տպագրութեան, վիճակագրու-
թեան, փորագրութեան եւ վերաբերեալ կաղ-
մաժք, ինչպէս նաեւ բժշկական, վիրաբուժական եւ
մեքենական գիտութեանց յատուկ բոլոր գործի-
ները գեղեցիկ կարգաւորութեամբ մը:

Էյֆէզի աշտարակին սակ. — Հոս փոքրիկ քաղաք
մըն է որ երեան կուգայ զարգարուած պարտէզ-
ներով, մարդագետիներով ու շատրուաններով:
Ճաղատաներուն մեծագոյն մասը յատկացուած են
անհատական նախաձեռնութեանց: Աշտարակին
աջ կողմը կը բարձրանան բոլոր տաղաւարներուն
իշխելով Թուռ սիւ Մօնէի գագաթները, վիթխա-
րի շէնք մը, ուր եւրոպական, արեւելեան, հնդ-
կական, չինական եւ ճապոնական ճարտարապե-
տութեանց ճաշակներ կուգան զիրար խաչաձեւել:
Անոր քովն է տարազներու սքզլատը, որ զարգա-
սէրներուն եւ նրբաճաշակ մարդոց ժամագրաւայ-
րը եղած է: Դէմը կը տեսնուի ջրվէժներու մէջ
Բէնուսի լուսաւոր պալատը, հեռուն՝ Զուիցերիայ
շաշէն եւ Սէն Մարթէնի Հանրապետութեան տա-
ղաւարը:

Թրոքատեքոյի պալատին առջեւ ամբիթատրոնի
ձեւով պարտէզներուն մէջ կարգաւ հաստատուած
են Ֆրանսական եւ օտար գաղթականութեանց
տաղաւարները:

Գիշերները Արուեստահանգէսին մեծ գուռը
տարօրինակ հակապատկեր մը կը ներկայացնէ
շրջակայ լուսավառութիւններու հետ: Կամարը որ
կանաչ, կապոյտ եւ մանուշակագոյն լոյսերու մէջ
կը շողայ, սիրամարդի փետուրներու ճաճանչա-
ղեղ փունջ մը կը ներկայացնէ: Մինակ Թրոքա-
տեքոյի պալատին լուսաւորութեանը համար 10,000
Փր. ծախք կըլլայ մէկ գիշերը: Շան սի Մարսի
մէջ ալ ելեկտրականութեան արձանին ձեւերէն
դուրս կը ցայտէ մէկ մէդր բարձրութեամբ փայ-
լակ մը: Դիւիդնաւոր վէտվէտումներով ու կը կաղ-
մէ հիանալի լուսավառութիւն մը:

(Շար.)

8

402

«ՀԱՅԵԼԻ»-Ի ԽԱՐԱԶԱՆԻՆ

Չաթ, փաթ, թաք, թըռաք,
Խաչագողին զարկ:

Դէն, խօսքդ դասարկ,
Չարկ... անուշքս... զարկ:
Մի՛ նայիր կարգ սարկ,
Վերէն վար դու զարկ:

Կաշակներ արեան
Տախ տախ արակեցան
Իմ եղբոր մօրկան
Դիականց վրասն:

Բխրք բխրոց անդին
Չոն եղան տոսին.
Խաչափոյ՝ քորփին
Չքրածն աչ ըրին:

Տներ քանդեցին,
Հայրենի աշխարհ
Անք դարձուցին
Անոնք ծայրէ ծայր:

«Չենք» ըսին, առին
Իրենք կըղեցին,
Խեղճ Հայր անդին
Անգէն քողոցին:

«Տո՛ւր» ըսին առին
Հացք՝ արխնին
Մէջք քարխնեցին
Ուրիշ սասանին:

Յանուն սուրբ գործին
Կերան խրմեցին,
Ու կասաղած չուն
Դարձան վեր գիտուն:

Այ ո՛ւմ կը նայիս,
Անուշ Հայեղիս,
Չաթ, փաթ, թաք, թըռաք,
Խաչագողին զարկ:

ՎՇՏԱՀԱՐ

Վ Ի Ճ Ա Կ

Հէր կիւն Մուսալլատա պիր գահվէխսնէտէ օթու-
րուպ, շէհրին քեաֆֆէի վուգուսթլարնա, քեզալիբ
էվրօքա վէ Ամերիկատա նէշր օլունան կազէթլարըմը-
զը օգուլուպ՝ օնլարն հալ ու էթվարընա ազ չօք ա-
կեահ օլան պիր թաղըմ՝ զաթլար՝ իշպու բէնճէնպիհ
կիւնիւ էմրարը վազթ իթմէք իշին Մաֆսուտ աղա նամ
մահալտէ կէօլկէլի պիր աղաճ ալթնտա օթուրուպ, շու-
եօլտա պիր մուհաֆէրէտէ պուլունմուշլար տըր:

— Չօճուգլար, մէրամ վազթ կէշիրմէք տէյի՛լ
մի, կէլինիզ պիր վիճակ չըգարալըմ:

— Ամմա էթտին հա, բուլճու վատէ, կէօյա վի-
ճակըմըզ պէլլի տէյիլ տիր կիպի, պիր տէ վիճակ չը-
գարալըմ տէյօրսըն:

— Պրէ գուգուլ, պիլիբիմ, հէփիմիլին վիճակընա պու-
սէնէ գօփօզլուգ տիւշմիւշ իսէ տէ՛ պէնիմ տէտիլիմ՝ բիա-
ցատա պուլունան կաղէթլարըմըզըն հալ ու էթվարլարը-
նա միւթապըզ պիրէր եաղըշըզլը վիճակ սէօյլէմէք տիր:

— Պէճէրէպիլիլիմիլիզ տէրսին:

— Վըզըր վըզըր, կէշէն սէնէ Գարաբաշա նա՛սըլ
պէճէրէպիլտի:

— Սիւզլէ սէօյլէյօրսըն աւա՛ պու կիւն Համբար-
ձում եօթուսու տըր, տսըլ վիճակ կէլէճէք հինգշաֆ-
թի տիր, վիճակը օ կիւնիւ չըգարալըմ:

— Պիլիյօրըմ, Աիթուանճըմ, Փափաթ կէլէն հաֆ-
թա հէփիմիլ պէօյլէ պիր եէրտէ պուլունամայաճաըզ,
Տօպիլի բանայըրը օլտուլընտան՝ պիր թաղըմըմըզ օրա-
յա կիտէճէիլ, Պափընըզ, պիլիմ Միւսիւ Սիմնօֆտա պիր
գաշ արգասաղլարա պու թարաֆա կէլիտօր, օնլար տա
կիւզլէ շէլէր սէօյլէյէպիլիլիլէր:

— Էյի ամմա՛ պէն հայճա վիճակ սէօյլէյէմէմ:

— Գա՛րտաշ, իսթէյէն հայճա սէօյլէսին իսթէյէն
թիւրքճէ: Պուլուրսուշլար Միւսիւ Սիմնօֆիշ:

— Բարե ձեզ տեարք:

— Աստուծոյ բարին եղբայրք, պուլուրուն:

— Հոս նստեր ի՞նչ կընէք:

— Էֆէնտիմ, հայճա կաղէթաներուն վրայ վիճակ
պիտի հօսինք, դուք ալ պէրապէր պիտի ըսէք:

— Հատ ալէկ սիրելիս կըսենք:

— Հայտէ Գիրգօրիկ աղա, պաշլա՛:

— Եօզ, էվզլէ սէն պաշլամալըսըն, շիւնքի թէրլիֆ
սէնտէն օլույօր:

— Էօյլէ իսէ տիննէյին:

— Տիննէյօրըզ:

—Տէյուպ տայիմա մէնպար մէվսուգէտէն,
 Հափատիս էնտիրիր տէրէտէն թէքէտէն,
 Հիւ պըգմաղ, օսանմաղ, վերմէղ խաթիմէ՝
 Ելէ կէշիրսէ պիր Եէնի մէսէլէ:
 —Պու Իրաւունք օլմալը:
 —Էվլէթ, թա բէնտիսի:
 —Էյ պոսփօ Բուլճու զատէ, սէնտէ էքէյիճէ
 մալիւմաթ վար ըմըշ:
 —Ապթընտա պիղ տէ ազ չօգ քեահատ գարա-
 լամըշըզ կալիպա Խա:
 —Հայտէ պագալըմ Նշանիկ աղա, պաշլա՝
 —Պիթիմի չարբըզ աղաճ սողրուլմաղ,
 Էյրի ճէտվէրլէ սողրու չըղըմաղ:
 Քիւֆր ու զարագտան արի պիր Նիւսիսէ՝
 Իլաճ չիւն օլսուն պիզտէ պուլունմաղ:
 —Պու Բիճ իմիշ:
 —Մալիւմ ա՛, Շարժում:
 —Բէք էյի: Արշ պագալըմ, Էրպիս:
 —Այմը պիր Այնա, Տիւշմիւշ մէյտանա,
 Հէփ պաշըմըզա՝ Բիւսկիւլիւ պէլա:
 —Էյ պոսփօ սանա Գարաբաշա:
 —Գալֆա՛, օրրա կէլտի սանա:
 —Պիր կիւն Նազարըն չալար տափուլուն,
 Պիր կիւն Դրօշակըն իւֆլէր պօսուսուն,
 Եէրի Խուրտու Տիւ պէլլի օլուր մու՝
 Պիր տալտա սուրմաղ պիլմէյէն գուշուն:
 —Գալֆա՛, Միւսթիւն օլմալը տըր պու:
 —Էվլէթ, թամ պաշընա գօնտուն:
 —Թուսիկ աղա, հայտէ պագալըմ:
 —Կիտէր կէլիր էշի Խօգ,
 Էնթարինին բէշի Խօգ,
 Տիպսիղ բիլէ պօշ տնպար
 Հափատիս մաւթիշ աղաբար:
 —Պու հա՛նկըսը տըր:
 —Մըստա չըգան Արշալոյս տըր, գա՛րտաշ, թէք-
 միլ իլան տօլմաղ, սըրալարը տա օգատար, կէնիշ բի՝
 արասընտան շըմէնտֆէր իլէ թրամվալ կէշէպիլիր:
 —Նէ՛ Խաթըն զափալը, շիւքհէսիղ Խաթըն թիւ-
 բէնմիշ օլմալը:
 —Անթուան, Նէօպէթին կէլտի:
 —Իշթէ սէյլէյօրըմ:
 Եէթէր կայրու պունճա ճէֆա է՛յ ֆէլէք,
 Օնպէշ սէնէ քեահատ, գալէմ սարֆ իթմէք,
 Պօշունա կիթմիշ վէրտիղիմ էմէք,
 Շիմաի մէճպուր օլտում իշտէն չէքիլմէք:
 —Պագալըմ բի՛մ իմիշ շու պիլիմ կիպի իշտէն
 չէքիլմէք իսթէյէն:
 —Պագա Արմէնիս տըր:
 —Աֆէրիմ Անթուան, էյի պէճէրտին:
 —Միւսթիւ Սիմոնֆ, հրամմսէք:
 —Շատ աղէկ Եղբայրս, ըսեմ:
 Խիլքէ շատ աղէկ, ըսելիք չի կայ,
 Գրիշէ զօրաւոր, նմանք քիչ կայ,
 Ամեն բանի մէջ յախուան նետուիս,

Բայց փորձագութիւն՝ աւա՛ղ, դու չունիս:
 —Եղբայր, աւ ո՞վ էր:
 —Անահիտն էր:
 —Մէրսի, շատ աղւոր էր:
 —Միւսթիւ Բօգրատ, մի՛ մտմտար, հրամմէ՛:
 —Իս պատրաստ եմ մտիկ ըրէ՛:
 Անունըս Մարտ է, Կըրիւ ըսել է,
 Սահայն ընթացքըս՝ Մարտ հափատի է:
 —Քիմ օլտուղու պէլլի՝ արիֆ թարիֆ իսթէմէզ:
 —Հատէ պագալըմ, Արթին աղա, պաշլա՝
 Պալ թուլման հէլպէթ Խալար բարմաղի,
 Զէյթինի պէնի չօգ էհեա իթտի,
 Չարը չէշմ իլէ պէքլէրիմ շիմտի՝
 Ելէ կէշիրմէք է՛յիլէ պիր Վօլի:
 —Կուկուկ, արթըգ իսթէտիղին գատար պէքլէ,
 տալը Հնչակ:
 —Բէնիկ աղա, պուլուսունլար:
 —Մէյտանէ կէլտիմ գահրաման կիպի,
 Պաղըրտըմ հէման ա՛րշըն իլէրի:
 Գափկայա կիրտիմ, վուրտում, գաղանտըմ,
 Տէլտիմ Շարաֆըն քէշէ բիւլահըն:
 —Նէ՛ պէյիւք ֆիթուհաթ, Պարոն Դրօշակ:
 —Բէք ալա, բէք ալա: Էյ միւսթիւ Աւետիս, շաքար
 մըն ալ դուն զամէ:
 —Անոցը բիթըս, Թուլթերը ձեռքըս,
 Պաղտիմ ճառեմ, Աւր եմ նէ հոն եմ:
 —Աղբար, աւ ո՞վ է:
 —Լաւմէնին է. զափալըն մտիկ ընող չի կայ:
 պարապ տեղը շունչ կը հատցնէ:
 —Միւսթիւ Սիմոնֆիշ, հատ մըն ալ ըսէ:
 —Շատ աղէկ Եղբայրս, ըսեմ:
 Անունս է Նոր կեանք, Պատմածս է հին կեանք,
 Մեր նոր սերունդին՝ Հին օրինակ տանք:
 —Բարե ձեզ, հոս նստիր ի՛նչ կընէք:
 —Այ միւսթիւ Զիւմրիւթ, աղէկ ատենին հասար-
 վիճակ կըսենք կոր, Ամերիկայի երկու հայ շարաթա-
 թերթերէն մէկուն համար վիճակ մը պիտի ըսես:
 —Ըսեմ անուշ, ըսեմ:
 Զուռնայիս ահէնկ կառնեմ ծընէվէն,
 Դրացիիս հետ միշտ կընեմ խեղ, բէն:
 —Հիւ գաշմաղ, պու Հայրենիք տիրի
 —Պարոն Բուզանդ, Նէօպէթ տէ սէնըն տիրի
 —Փէշրէֆիղ պօսուս տայիմա կը փշեմ,
 Աւր որ կօիւ կայ, քիւլահս հոն նետեմ:
 —Աֆէրին. պու աւ Չայն Հայրենեայ օլմալը:
 —Օլմալը օլմալը տէյօրըզ տմա՝ պիր աղ տա հափա-
 յա պագալը. պուլուլար իւլէրիմիլտէ շատամպօլ
 տէսնէյօրլար:
 —Աման Գարաբաշա, Խաղաւոր թուլուլայալըմ,
 հայտէին Մուսալլայա կիտէլիմ, գահվէլէր շիմտի աշըլ-
 մըշտըր տէյուպ, մէճիսէ իիթամ վէրիլլէր:

Отговорникъ: М. Сконовъ.

Печатница „ВЗАИМНОСТЬ“ — Варна.